

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ
ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

XII – դասարան

1. Հայ ժողովրդական բանահյուսության ամենահարուստ էջերը հեքիաթին են վերաբերում: Մեր ժողովրդի անսահման երևակայությունը ստեղծել է ժողովրդական հեքիաթների անկրկնելի գանձարան, որից օգտվել են մեր գրողները: Հայ բանահյուսությունից ամենաշատը օգտվել է ամենայն հայոց բանաստեղծը. Նա մշակել է բազմաթիվ հեքիաթներ, բայց իր իսկ խոստովանությամբ «միակ կարգին հեքիաթը», որ կատարելության է հասցրել, «Քաջ Նազարն» է: Այն գրվել է 1909-ին . մշակման համար հիմք են ծառայել մոտ քսան ժողովրդական պատումներ: Թումանյանը օգտվել է «Դրժիկոն» ժողովրդական հեքիաթից. Նա տեսել է այս հեքիաթի ոսկե հատիկը, տեսել է ժողովրդի սպանիչ ծաղրը այն թագավորների և իշխողների նկատմամբ, ովքեր, որևէ արժանիք չունենալով, վճռել են ուրիշների բախտը:

Նազարի նախաստիպ Դրժիկոնը աղքատ ու անբախտ մարդ էր, որը աներես կնոջ երեսից որոշում է «գլուխն առնել, կորսվիլ»: Թումանյանը հիմնականում հավատարիմ է մնացել հեքիաթի ոգուն, բայց երգիծական խոսացումներով կատարելագործել է նրա կերպարը, ավելացրել նոր իրադարձություններ և ստեղծել անթերի կերպար, որը մարմնավորում է ապաշնորհ մարդկանց, ովքեր բախտի քմահաճույքով իրենց բուռն են հավաքում մարդկանց, իշխում են նրանց, քեֆ անում ու ծիծաղում աշխարհի վրա. «Ի՞նչ քաջություն, ի՞նչ խելք, ի՞նչ հանճար, դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդուս բախտն է: Բա՛խտ ունես՝ քեֆ արա»:

Թումանյանի Քաջ Նազարը հավաքական կերպար է, իր մեջ պահպանում է հարատև գծեր բոլոր ժամանակների համար: Բայց կա նաև մի ներքին քաղաքական սրվածություն՝ ընդդեմ բռնակալների ու անբանների:

Հանճարեղ մշակման շնորհիվ Քաջ Նազարը դարձել է հասարակ անուն. Մտել է կյանքի մեջ՝ «պարծենկոտ Նազար», «Նազարի բախտ» և այլն:

Ժողովրդական նույն «Դրժիկոն» հեքիաթը մշակեց նաև Դերենիկ Դեմիրճյանը 1923-ին: Դեմիրճյանը վկայում է . «երբ գրում էի Քաջ Նազարը», ես դեռ շարունակում էի «մարդու լուսաբանությունը»:

Սա հրաշալի վկայություն-բանալի է՝ հասկանալու Դեմիրճյանի հեքիաթ-կատակերգության հերոսին, որի եսակենտրոնությունը սահման չի ճանաչում: Դեմիրճյանը կերտել է «սարսափելի մարդու» էությունը բացահայտող կերպար՝ «աշխարհը բռիս միջին է», «Ես հերիք եմ», «Իմ ցեղը սուրբ է», «ժողովուրդը պիտի աշխատի, ես ուտեմ», «պիտի սրբերի դասը դասվեմ» և այլն և այլն:

Եթե Թումանյանի Նազարը մինչ օրս էլ ծիծաղում է աշխարհի վրա և թագավորում ,
ապա Դեմիրճյանի Նազարը գահընկեց է արվում, որովհետև ժամանակի պահանջն էր
դա:

Թումանյանի Քաջ Նազարը «աշխարհի վրա ծիծաղում է» «ակամա՝ կույր
պաշտամունքի թելադրությամբ, իսկ Դեմիրճյանի Քաջ Նազարը «սարսափելի մարդ» է,
և Դեմիրճյանը նրան ներկայացնում է չհանդուրժող ծիծաղի ալիքներով՝ փորձելով
խարխլել քաջնազարականության բոլոր արտահայտությունները:

Այս հեքիաթը մշակել է նաև Ավետիք Բասահակյանը «Աղա Նազար» վերնագրով,
Բասահակյանը Նազարին ներկայացրել է մի գյուղի սահմաններում. Նա գործն առաջ է
տանում նախախնամության «կամքով»:

Բոլոր հեղինակների մոտ երևույթը մեկնաբանվում է միջավայրի անսանձ
հիմարության , կույր բնագոյների, նախախնամության «կամքով»:

Թումանյանը քեն ու վրեժ չունի Նազարի նկատմամբ՝ ծաղրն ուղղելով այդ երևույթը
սնող հասարակական բարքերի դեմ, Բասահակյանը ներկայացնում է գեղջկական
«ներող» հումորով, իսկ Դեմիրճյանը՝ «սարսափելի մարդու» բնութագրով:

Հեքիաթը մշակել են նաև Ստեփան Ջորյանը, Համաստեղը, Մ. Սարգսյանը:

2. Հովհաննես Շիրազը (Օնիկ Կարապետյանը) հայ քնարերգության ինքնատիպ
բանաստեղծներից է՝ ինքնության կնիքով, ինքնաստեղծ բառա-
պատկերներով ու բառապաշարով:

Նա իրեն համարում է 1915թ. Եղեռնից ծնված բանաստեղծ, ում գրական ուսուցիչը «եղել
է և է ժողովուրդը»:

Նրան Շիրազ գրական անունով է մկրտել «Տժվժիկի» հեղինակ Ատրպետը, քանի որ
«Պատանու բանաստեղծությունները վարդաբույր են , թարմ ու ցողապատ, ինչպես
Շիրազի վարդերը»:

Շիրազը երգել է բնություն, գարուն, սեր, կին, աստվածացրել է Մորն ու Մասի
սը , ողբացել է հայոց Մեծ եղեռնը, փառաբանել է խաղաղությունը, հավատացել է իր
ժողովրդի հաղթանակին ու կտակել որդուն .

«Քեզ մեր սարերն են կտակում, որ դուրս բերես սև ամպից,

Որ տուն բերես շալակած արդարությամբ մեր անբիծ...

Ու երբ բերես, իմ բայիկ, սիրտս էլ շիրմից կհանես,

Կբարձրանաս ու սիրտս ազատն ի վեր կտանես

Ու կթաղես իմ սիրտը ձյունների տակ Մասիսի,

Որ շիրմում էլ դարավոր հուր կարոտից չմրսի:

Քեզ Մասիսն են կտակում, որ դու պահես հավիտյան,

Որպես լեզուն մեր հայոց, որպես այունը քո հոր տան»:

Բանաստեղծի սիրտը թաղված է Մասիսի ձյունների մեջ, բայց կտակի I-մասը՝ ետ բերել
Մասիսը, դեռ սպասում է...սպասում է մեր Նահապետը և կարոտից հավվում են
հազարամյա ձյունները:

Շիրազը բնության անկրկնելի երգիչ է, բնության հետ ապրող ու շնչող:

Բնության երգերից լավագույնը «Թագադրում» բանաստեղծությունն է, որտեղ բանաստեղծն իրեն համարում է բնության արքա:

Նրա հոգին արթնանում է «հարավի բույրից», նա տեսնում է արևի ջահել համբույրից լացող ձյունը, տեսնում է ձնծաղիկների ծաղկումը, համբուրում է ձյունից իրեն նայող նրանց աչուկները... Եվ թոչում է ծիծեռնակների հետևից՝ նրանց հետ գարունը բերելու: Բանաստեղծն ավելի հեռուն է գնում.

Բարձրանամ կապույտ գահը լեռների,
Արևն իբրև թագ իմ գլխին առնեմ,-
Հագնեմ ծիրանին արշալույսների
Գարնան թագավոր ինձ թագադրեմ...

Եվ գարնան թագավորի առաջին հրովարտակը լինում է՝ «Գարունները գան ու չգնան...»: Մա կյանքի հաղթանակ է մահվան նկատմամբ, սա բարության ու նվիրումի երգ է, չարությունը մերժող հզոր հրովարտակ, քանի որ կյանքի հավերժական տոնի մեջ բեկվում է մահվան խորհուրդը...

Շիրագին հրաշալի է գնահատել Վիլյամ Սարոյանը. «Շիրագ մեծ տաղանդ մըն է... Շիրագ թանկագին հոգի մըն է: Շիրագը շատ իրավացի է, որ Արարատ կերպով: Որովհետև ամեն հայ մեկ Արարատ է և Արարատ ըսել՝ հայ ըսել է»: Հայոց վշտի Մասիսը, Շիրակի անմահ խնկարկուն:

3. Վիլյամ Սարոյանը ծնվել է 1908-ին, Բիթլիսից Ֆրեզնո գաղթած հայ քարոզչի ընտանիքում: Վաղ է գրկվել հորից, բայց իր ծագումնաբանությանն անդրադառնալով գրում է. «Իմ վերևս, այս պզտիկ, խառնշտկված սենյակին պատին վրա կա իմ մեռած հորս լուսանկարը, և ես աճած եմ իր դեմքով և իր աչքերով և անզիերենով գրելու վրա եմ այն, ինչ որ պիտի ան գրեր ձեր բնիկ լեզվով... Կ'ուզեմ ձեզի ցույց տալ, թե ես և հայրս նույն մարդն ենք»:

Սարոյանը համաշխարհային գրականության բացառիկ դեմքերից է, բացառիկ է, որովհետև լինելով ամերիկյան գրող, նա միաժամանակ հայ ազգային գրող է: Իր իսկ խոստովանությամբ. «Լեզուն, որով գրում եմ, անզլերենն է, միջավայրը, որ նկարագրում եմ, ամերիկյան է, բայց ոգին, որ ինձ մղում է գրելու՝ հայկական է: Ուրեմն ես հայ գրող եմ և պատկանում եմ հայ գրողների ընտանիքին»:

Սարոյանը դաստիարակվել է իր մեծ մոր՝ Լուսնթագ Ղարոզլանյանի երգով ու կենցաղով. «Իմ մեծ մայր Ամերիկայի մեջ ալ Բիթլիս կապրեր: Ան առանձին աստված ուներ, կրոն չէր գիտեր, անոր աստված ուրիշ էր, ան ամենեն շատ մարդու խելքին ու գութին կհավատար ու չէր վհատիր, չէր հուսահատիր »:

Սարոյանը մեկ տասնյակից ավելի պատմվածքների ժողովածուների, բազում թատերգությունների, վիպակների հեղինակ է: Ունի նաև «Վեպի Ջեկսոնի արկածները» վեպը: Նրա շատ ստեղծագործություններ բեմադրվել են և էկրանավորվել. «Իմ սիրտը լեռներում է», «Հե՛յ, ո՞վ կա այդտեղ», «Հայրիկ, դու խենթ ես», «Մայրիկ, ես քեզ սիրում եմ »:

Մարոյանի «Մարդկային կատակերգություն» վիպակը նվիրված է իր սիրելի մորը. «Վաղուց էի պատրաստվում մի վիպակ գրել հատուկ քեզ համար: Ես ուզում էի , որ այն լիներ լավագույնը, որ երբևէ կարողանալու եմ գրել: Հուսով եմ , որ շուտով մի մարդ վիպակը կթարգմանի հայերեն և այն կտպագրվի քո լավ իմացած լեզվով: Այն թարգմանված գուցե ավելի լավ ստացվի , քան անգլերենով, և դու գուցե ցանկանաս կարդալ ինձ որոշ կտորներ, թեև ես եմ գրել: Եթե այդպես լինի, խոստանում եմ ունկնդրել քեզ և սքանչանալ մեր լեզվի գեղեցկությամբ: Գիտեմ, վիպակում ամեն ինչ չի ասված, բայց ի՞նչ արած: Միևնույնն է ,քեզ անպայման պիտի թվա, որ այնտեղ ամեն ինչ ասված է, քանի որ գրել է քո որդին և գրել ամենալավ և բարի մտքով»:

Վիպակի հերոս Հովեր Մաքուլի ցրիչը ինքը Մարոյանն է:

Իր ստեղծագործության մասին Մարոյանը ասում է «փնտրիր բարին ամենուրեք, և թող նա լինի ազատ ու աներկյուղ... Արթնացրու առաքինությունը, ում սրտում էլ որ նա գաղտնի ու տրտում թաքնվելիս լինի աշխարհի սարսափներից ու ամոթից... Եվ քանի ապրում ես... ոչ մի բան չավելացնես աշխարհի աղետներին ու տխրությանը, այլ ժպտա կեցության անծայր խնդության ու գաղտնիքի հանդեպ»:

«Ատեցեք չարությունն ու ստորությունը, բայց ոչ չար ու ստոր մարդկանց»:

Մարոյանը կտակել էր՝ իր աճյունի մոխրի մի մասը բերել Հայաստան. Այժմ նա հանգչում է իր պաշտած Կոմիտասի, հայոց մյուս մեծերի կողքին՝ հայ մեծերի պանթեոնում:

Շրջասույթներ՝ կենսախինդ հայ, բարի հսկա:

4. Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» : «Ռանչպարներին » Դաշտենցը նվիրեց իր կյանքի և հոգու մեծագույն հատվածը : «Ռանչպարները» պատմում է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայոց ազգային ազատագրության այն հերոսների մասին, որոնք պատմությանը հայտնի են

«հայդուկներ» (ֆիդայիներ) անունով:

«Հայդուկի» բառարանային բնորոշումը՝ «գեղջուկ, որը ոտքի է ելել իր իրավունքների պաշտպանության համար »: Այս բնորոշումը հավասարապես վերաբերում է նաև հայոց հայդուկներին, որոնք իրենց կյանքը դրին հայրենյաց փրկության գոհասեղանին՝ արժանանալով ժողովրդի անխաբոյալ հիացմունքին: Վիպասքը հրատարակվեց հետմահու .իբր գրքի խորագիրը դարձավ Դաշտենցի անմահության կանչը:

Որդեգրելով ժողովրդական հավատի վրա խարսխված աշխարհայացքը և ռանչպարության աշխարհագրագոությունը դնելով իր պատումի հիմքում՝ Դաշտենցը բացահայտում է ազատագրական շարժման հերոսական բովանդակությունը:

Իսահակյանը հենց այս նկատի ուներ, երբ Դաշտենցին համարում էր էպոսային-ասքային տարերքի գրող:

««Ռանչպարների կանչի» համար ազդակ են հանդիսացել երկու զրույց»-վկայում է Դաշտենցը: Մեկը Թալինի Իրինդ գյուղի երևելի շինական Ափո Գալուստ-Քոթանյանի հետ, որը պատգամում է Դաշտենցին՝ «Շատ ձորերի գլուխը մի ձոր է, շատ խոսքերի գլուխը՝ մի խոսք: Էնպես արեք, որ մեր հետքերը չկորչեն»:

Մյուսը «Խողեղան» վեպի հերոսներից մեկի՝ Գոմաս Մելիքի կնոջ հետ ունեցած զրույցն է, որը հիշեցնում է «կարմիր աստվածների» առասպելական սերնդի գործերն անմահացնելու մասին:

«Այդպիսի սերունդ եղավ, այդպիսի սերունդ դժվար թե կրկնվի», - հավաստում է Դաշտենցը:

Արագածի լանջերին համախմբված սասունցիներից յուրաքանչյուրը մի պատ մուրթուն, մի եղելություն է պատմել հեքիաթի պես և «նրանք խումբ-խումբ եկան ու լցվեցին այս վիպասանության մեջ», -ասում է Դաշտենցը:

Հայոց Դպրեվանքի պատանիներից մեկը՝ Սմբատ Բոլոյանը՝ «Մախլուտո» մականունով, «ռանչպարների կանչով» դառնում է ազգային շարժման զինվոր և պատմում է իր կյանքի դրվագները, ուր տեղ ունեն առասպելական անունները՝ Արաբո, Աղբյուր Սերոբ, Անդրանիկ, Գևորգ Չաուշ, Մորուք Կարո, Փեթարա Մանուկ, Արծիվ Պետո, Փեթարա Խրո (նա քրդերից հայ որբեր էր հավաքում՝ «շիթիլ անելու» Հայաստանի համար), Սոսե մայրիկ և այլք: Նրանք չունեին եսական սեր, նրանք ունեին միայն մի իդեալ՝ տառապելով ծառայել հայոց ազատությանը:

Անդրանիկը, դիմելով իր զինվորներին, ասում է. «Մեծ համբերությամբ կրեցիք ձեր չարչարանքը և հավատքով տոկացիք անթիվ զոհողության... Ազատ ապրելու կամ հերոսաբար մեռնելու վճիռը նահանջի մատնեց ձեր մեջ ուրիշ ամեն իդ... Դուք սովորական մարդիկ չեք, այլ հրեղեն մի սերունդ...»:

Դաշտենցի այս վեպը միշտ համահունչ է ցանկացած ժամանակի, քանի որ հպարտ ու արժանապատիվ հայն է խոսում մեզ հետ, հեղինակը մեզ է ժառանգում հայրենի եզերքի կենդանի քարտեզը, և մենք պարտավոր ենք այդ հայրենիքի տերը դառնալու: Ըստ Դաշտենցի՝ «Արարչություն է անանձնական կյանքը»: Այսպես պիտի մտածի մեզնից յուրաքանչյուրը:

5. Մուշեղ Գալշոյանը մեր կարոտի գրականության անխոնջ սերմնացանն ու հնձվորն է, մեր հիշողության աննինջ երակը, մեր օրերի ասացողը, որ պատմում է էպոսի երգասացների նման, և Սասունի չքնաղ բարբառը դառնում է հերոսական ասք ու երգ: Գալշոյանը եղեռնից մազապուրծ խլյակին սերունդն է. նրա պապերը տեսել են ավեր ու կոտորած, արյուն, կրակ, արցունք...

Սասնա լեռների կարոտը եկել ծվարել է Կաթնաղբյուրում, այդ ջրով են սնվում իրենց հիշողության մեջ Սասնա սարերի մշուշները պահած, գաղթի ճամփաների արհավիրքը արյան եռք դարձրած նոր սասունցիները: Կաթնաղբյուրը «Էրգրի» շարունակությունն է:

Ահա այս հիշողության արահետով քայլում է Ջորի Միրոն, ով եղեռնից մազապուրծ եկել հանգրվանել է մայր հողում, տուն է կառուցել՝ «Գյուղեզրին խռոված մի տուն կա՝ թիկունքը գյուղն արած, շեմ ու դուռ՝ ձորի ցանցառ ու անտաշ ատամներով բաց երախին»:

Այս վիպակում գործող անձերը քիչ են. Միրոն է՝ իր հիշողություններով, հին ու նոր ողբերգություններով: Ահա նա կապված է ընկուզենուց, իսկ իր առջև Հարութ պապն է. «Մի խզակոթ իջավ Հարութ պապի գլխին... պապն ընկավ, գլուխը բարձրացրեց նայեց տան կողմ, իրեն նայեց, ասկյարները էլի զարկեցին ու պապի դեմքը թաղվեց հողի մեջ: Ծաղկաթերթեր էին կաթկթում պապի ճերմակ ու կարմիր գլխին, տունը խուլ տնքում էր...» :

Միրոն անցնում է արհավիրքների միջով, մենակ է մնում, մի բուռ ֆիդայիները զոհվում են Սեպասարի կովում. Մնում է Ձորի Միրոն՝ իր հետ տանելով Սասունն ու հուշերի քարավանը, որը այլևս իր կյանքն է: Նա խռոված է աշխարհից, նրա տունը թիկունքը գյուղին է արել. Նա իր միակ որդուն, որ ծիլն է Սասունի, ճանապարհում է կռիվ: Սայլի վրա նստած՝ նա զրուցում է որդու հետ. «Հարութ... Աշխարք հող ու ջրից անուշ բան չկա: Մարդու ուժ հողի մեջ է: Քանի հող չեն խլե ոտաց տակեն, մարդ անպարտ է, թեկուզ զարկվի՝ անպարտ է, խլեցին՝ գերի է, գառ: Հարո՛ւթ, մարդ սպանելուց էլ հարկ է՝ մարդ մարդ մնա: Կսպանիս, Հարո՛ւթ, տղամարդի պես զարկ ճակտին, հոգու հետ խաղ չանիս»:

Ցնցող է Միրոյի նամակը զինվոր որդուն, թերևս նա գիտեր, որ որդին չալտի վերադառնա ու իր մի նամակում կանչում է Հարություն. «Հարութ, գառ, էն օրվանից որ քու ոտք դուրս եկավ տնից, էն օրվանից բոց չի ընկե թոնդրի մեջ, երդիկից ծուխ չի ելե... Իմ տաք թունդիր Հարո՛ւթ, իմ ծուխ, Հարո՛ւթ» :

Գալշոյանի «Ձորի Միրոն» վիպակը վիպասք է, հիշողության գետ, արյան կանչ, վկա՝ եղեռնի: «Ձորի Միրոն» նկարահանվել է 1979-80 թ.թ. Սցենարի հեղինակ՝ Մուշեղ Գալշոյան, ռեժիսոր՝ Ժիրայր Ավետիսյան, Միրոյի դերում՝ Սոս Սարգսյան:

Գալշոյանի այս հրաշալի վիպասքը եկավ խառնվելու ռանչպարների կանչին եկավ լցվելու կարոտի գետը, որ վարարելով՝ ընթերցողին իր հետ Սասնա սարերն է տանում, տանում է Ծովասար ու Անդոկ, Մարութա բանցրիկ սարեր...

Շրջասույթ՝ Մութ ձորի լուսե մարդը (Հակոբ Կորսպենց), կամ Կաթնաղբյուրի կապուտաչյա հեծյալը, կամ Մամփրե արքայի վրեժածին թոռնիկը և այլն: